

Իսկուիի Ավանեսյան

ԱՐՑԱԽԻ ԿԱՆԱՅՔ 1988 թ. ՀԱՅՈՅ ՀԱՄԱՁԳԱՅԻՆ ԶԱՐԹՈՆՔՈՒՄ

Ազգային ինքնուրույնություն, Յայ Առաքելական Եկեղեցի, գոյապայքար,
հանրապետություն, ազգային խորհուրդ, կառավարություն, ընդհատակյա
կազմակերպություն, քարոզչական աշխատանք, պատվիրակություն, հանրահավաք

Յայ ժողովովի բազմադարյա պատմության ընթացքում մշտապես կենսականորեն կարևորվել է կնոջ դերը, մանավանդ՝ ազգապահպաննան գործում: Յավատարին մնալով մայր լինելու իր վեհ առաքելությանը, հայուիին միաժամանակ սերնդեսերունդ հանդես է եկել որպես ազգային ինքնության ակունք ու պահապան: Դիմգերորդ դարի պատմիչ Ազաթանգեղոսի վկայությամբ նախաքրիստոնեական շրջանում հայ կնոջը վերաբերվել են որպես «մայր աղբյուր», «կենսատու սկիզբ», «շունչ և կյանք»: Քրիստոնեության ընդունելուց հետո դարձյալ ընդգծվել է հայ կնոջ դերը. Յայ Առաքելական Եկեղեցին դասել է նրան սրբերի շարքը (Դոփիսիմե, Գայանե): Յայ կինը հայտնի է եղել նաև որպես խիզախ մարտիկ, որ ճակատագրական պահերին տղամարդկանց հետ միասին ու համահավասար հերոսաբար պաշտպանել է հող հայրենին: Նկարագրելով Վարդանանց պատերազմը՝ պատմիչ Եղիշեն գրում է. «Կանայք մոռացել են թույլ սեղին իրենց պատկանելությունը և վերածվել են քաջարի մարտիկների հոգևոր այդ պատերազմում»:

Այդպես էր նաև Արցախյան գոյապայքարի ժամանակ:

Արցախի գոյապայքարը սկիզբ է առել 1918-1920 թվականներին: Այդ շրջանում Լեռնային Ղարաբաղը դե յուրէ մաս չի կազմել որևէ պետության, այդ թվում՝ Աղրբեջանի: Օսմանյան Թուրքիայի ճնշման տակ ստորագրված Բաթումի պայմանագրով նոր կազմավորված Յայաստանի Յանրապետության սահմաններից դուրս էին մնացել բազմաթիվ հայաբնակ տարածքներ, այդ թվում և Արցախը: Դրանից օգտվեցին նորաստեղծ Աղրբեջանի իշխանությունները՝ Գարդմանքը, Արցախը, Զանգեզուրը և Նախիջևանը հայտարարելով իրենց պետության մաս, սակայն տեղի հայ բնակչությունը դիմադրություն ցույց տվեց: Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը ընտրեց Ազգային խորհուրդ և կառավարություն:

1920 թվականին Յայաստանը և Աղրբեջանը դարձան խորհրդային հանրապետություններ: 1921 թ. հուլիսի 5-ին Ռուսաստանի բոլշևիկյան կուսակցության Կովկասյան բյուրոն գործելով Ստալինի անձնական ճնշման ներքո՝ վերանայեց նախորդ օրվա իր իսկ որոշումը և վճռեց Ղարաբաղը Ենթարկել Խորհրդային Աղրբեջանի իշխանությանը: 1923 թվականին Աղրբեջանի Խորհրդային Սոցալիստական Յանրապետության կազմում ձևավորվեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը՝ այդ կերպ սառեցնելով Ղարաբաղյան հիմնախնդրի լուծումը: 1921 թ. հուլիսի 5-ին Լեռնային Ղարաբաղը Աղրբեջանին բռնակցվելուց ի վեր արցախահայությունը

շուրջ 70 տարի բողոքում էր դրա դեմ, սակայն միշտ մերժվում էր Մոսկվայի և Բաքվի իշխանությունների կողմից, ավելին. Ադրբեջանը կանխանտացված խոչընդոտում էր Արցախի տնտեսական, գիտամշակույթային զարգացմանը, խանգարում Արցախ-Հայաստան կապերին, արհեստականորեն ավելացնում ադրբեջանցիների թիվը Արցախում:

1980-ական թվականներին ԽՍՀՄ-ը տնտեսական և քաղաքական խոր ճգնաժամի մեջ հայտնվեց: 1985 թ. կուսակցության 27-րդ համագումարը (1986 թ.) որոշեց վերակառուցել երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի բոլոր բնագավառները: Այդ որոշումները հայտնի են «Վերակառուցում» անվան տակ: Ոգկորված դրանով՝ Արցախի հայությունը կրկին բարձրացրեց 70 տարի ծխացող դարաբաղյան հիմնահարցը: Սակայն այն խաղաղ լուծելու հույսերն այս անգամ ևս հօդս ցնեցին: Արցախի հայությունը ստիպված էր ազգային-ազատագրական պայքար մղել:

Ենուս 1986 թ. հուլիսին Ստեփանակերտում հիմնվեց ընդհատակյա կազմակերպություն, որը 1987-ին ստացավ «Արցախյան միություն» անունը: Միությունը, որը բաղկացած էր 11 հոգուց, ուներ ծրագիր և կանոնադրություն: Կազմակերպության բաժանմունքներ հիմնվեցին նաև մարզի շրջաններում: Մարտունիում բաժանմունքի ղեկավարներից էր Անգելինա Յովսեփյանը: Միությունը 1987թ. ամռանը և աշնանն իրագործեց իր նվազագույն ծրագիրը՝ հավաքելով ավելի քան 80 հազար ստորագրություն, որը նոյեմբերի վերջին ներկայացվեց ԽՍԿԿ Կենտկոմ¹: Ստորագրահավաքները հիմնականում կատարվում էին գաղտնի: Այդ աշխատանքներին նվիրվածությամբ մասկացում էր շարժման ակտիվիստ Շողիկ Ասորյանը²:

Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելուն միտված քարոզական աշխատանքը հետզհետե ծավալվում էր Ստեփանակերտում, շրջաններում, կրթական հաստատություններում: Միևնույն ժամանակ շարունակվում էր հանրագրերի հոսքը Մոսկվա՝ խորհրդային ղեկավարությանը: Շարժման նաև կազմակերպությունը պետական մանկավարժական ինստիտուտի դասախոս, ներկայումս Արցախի պետական համալսարանի պյուֆեսոր Լենա Գրիգորյանի հավաստմամբ՝ ԽՍԿԿ ԿԿ գլխավոր քարտուղար Ս. Գորբաչովին նման մի հանրագիր է ուղարկվել նաև ինստիտուտի 200-ուսանողների ստորագրությամբ³: Նրա վկայությամբ առաջին հանրագրերը Մոսկվա են հասցել դասախոսներ Համլետ Գրիգորյանի, Տիկոլայ Ավագիմյանի և իր օժանդակությամբ: Հանրագրերի տեքստերը կազմել են իրենց տանը, անուսնու՝ գրող, հրապարակախոս Կոմիտաս Դանիելյանի, դասախոսներ Համլետ Գրիգորյանի և Սեդա Ղազարյանի մասնակցությամբ⁴: Նրա հաղորդմամբ՝ «Սովետական Ղարաբաղ» թերթի 1988 թ. մարտի 18-ի համարում

¹ Տես «ԼՂ Հանրապետություն», 1988, 21-ի հունվար: Ասեմք, որ 1988 թ. փետրվարի 15-ին Հայկոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Կ. Դեմիրջյանին իգոր Սուրաղյանի հղած դիմումում նշվում է, որ ստորագրահավաքին նաև ակտիվիստ Շողիկ Ասորյանի նաև ակտիվիստ Շողիկ Ասորյանը:

² Տես «» 10.03.1998:

³ «Արցախի համալսարան», թիվ 2, փետրվար 2010թ.:

⁴ Նույն տեղում:

հրապարակվել է Արգիկ Մխիթարյանի, Յանլետ Գրիգորյանի և իր համատեղ հոդվածը՝ Արցախը Հայաստանին վերամիավորելու մասին: «1988 թվականին Արցախում ծեռնամուխ եղան կատարելու ընդահատակայինների առաջին հանձնարարությունը: Մայր բուհի նպատակն էր հնարավորին չափ դասախոսների ստորագրություններ հավաքել Արցախը Հայաստանին վերամիավորելու համար: 13 ստորագրություն հավաքվեց, որն այդ ժամանակ մեծ հաջողություն էր», - գրում է նա, նշելով, որ հանրագրի տակ իրենց ստորագրությունն էին դրել նաև դասախոսներ Արգիկ Մխիթարյանը, Ռոնա Բալայանը, Սեդա Ղազարյանը, Աննա Յարությունյանը, Ալինա Բադալյանը և ինքը¹:

1988 թվականի փետրվարի սկզբներին Արցախից Մուսկվա մեկնեց ԼՂԻՄ-ի մտավորականության պատվիրակությունը՝ գրողների միության մարզային բաժանմունքի քարտուղար, բանաստեղծ Վարդան Յակոբյանի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում էին նաև Ստեփանակերտի Ս. Գորկու անվան պետական դրամատիկական թատրոնի դերասանուհի Ժաննա Գալստյանը և Սոցիալիստական աշխատանքի հերոս Գոհարիկ Սարինյանը: Փետրվարի 10-ին պատվիրակության անդամներին ընդունեց ԽՄԿԿ Կենտկոմի ազգամիջյան հարաբերությունների բաժնի վարիչ Վ. Միխայլովը, որը հուսադրեց նրանց: Պատվիրակության անդամ Ժաննա Գալստյանը նշում է. «Մեր՝ մտավորականներիս, Մուսկվա կատարած առաքելությունը ես որպես եմ որպես ուժանակ մեծ պայքարունի համար, որ տեղի ուեցավ նրան հաջորդող տարիներին»²:

Այդ օրերին Ստեփանակերտում և մարզի շրջաններում տեղի էին ունենում խորհրդակցություններ և այլ հավաքներ, որոնց թեման Ղարաբաղյան հիմնախնդիրն էր: Փետրվարի 12-ին Յաղորութիւնի և Մարտունիի շրջկենտրոններում տեղի ունեցան այդ շրջանների բնակչության առաջին զանգվածային ցուցերը, որոնցում առաջ էր քաշվում մարզը Յայկական ԽՄՀ-ին վերամիավորելու պահանջը: Բաքվից Եկած Էմիսարները ճնշումներ էին գործադրում մարզի կուսակցական և պետական մարմինների աշխատակիցների վրա՝ նրանց պարտադրելով մարզի հայ բնակչությանը համոզել, որ հրաժարվեն այդ պահանջից:

Փետրվարի 13-ին մարդկանցով լեփ-լեցուն էր Ստեփանակերտի Լենինի անվան (Աերկայիս՝ Վերածննդի) հրապարակը: Մարզկենտրոնում տեղի ունեցած առաջին հանրահավաքում ելույթ ունեցողների թվում էր նաև շարժման ակտիվիստ Արաբյա Յայրապետյանը: Խոսելով Ադրբեջանի իշխանությունների հակահայ քաղաքականության մասին՝ նա կոչ արեց հասնել հարցի արդարացի լուծմանը, մարզը դուրս բերել Ադրբեջանի կազմից³:

Շարժման մասնակից Յասմիկ Միքայելյանը, որն այդ ժամանակ Ստեփանակերտի կուսադարձում էր կրորդ քարտուղարն էր, վկայում է. «Առաջին ցուցից հետո, որը

¹ Նոյն տեղում, թիվ 2, 2008 թ. փետրվար:

² Յ. Արքահամյան, Մարտնչող Արցախը 1917-2000, հատոր Գ., 2007, էջ 35:

³ Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 11, թ. 25:

ուեկավարմերի մեծ նասին հանկարծակի բերեց, սկսվեց կրիտիկական վիճակից ելքի որոնումը: Ամբողջ օրը շշպանքներ ու քարոզներ էին տեղում, իսկ ուշ երեկոյան Կոտրկովի և այլ անձանց շուրթերից անսքող սպառնալիքներ լսվեցին՝ եթե վաղը հուզումները կրկնվեց, հետևանքները կանխատեսել անհնարին կլինի: Նույնիսկ ակնկալվում էր՝ հարյուր հազար «ֆանատիկներ» կարող են քաղաք ներխուժել (խոսքը վերաբերում է Ադրբեյջանի կոմկուսի ԿԿ վարչական մարմինների բաժնի վարիչ Ս. Ասադովի սպառնալիքին, որ նա հնչեցրել է կուսարզկոմի բյուրոյի փետրվարի 11-ի լուս 12-ի գիշերը կայացած նիստում. – Ի.Ա.): Գիշերը քաղկոն կանչեցինք շուրջ 750 հոգու՝ գլխավոր տնօրեններից մինչև տնային կոմիտեների նախագահները: Մյուսների թվում են ինքս էլ բնակարանից բնակարան էի գնում: Իսկ առավոտյան մոտավորապես ժամը 4-ին ձեռ ու ոտից ընկած, բեզարած, նյարդայնացած, մենք կողեւտիվ հեռագիր տվեցինք Մոսկվա այն նասին, որ Ստեփանակերտին քաղաքական սպանդ է սպառնում: Այդ խառնաշփոր գիշերը միայն խթանեց լարվածությունը: Կոնֆլիկտի սեղմված զսպանակը սկսել էր սրբնթաց կերպով շտկվել»¹:

Փետրվարի 14-ին Ստեփանակերտ տեղափոխվեց 12 միավոր տանկային շարասյուն: Յաջորդ երկու-երեք օրերին ավելի մեծ թվով գինվորներ հայտնվեցին քաղաքում: Չնայած նրան, որ քաղաքի փողոցները լեփ-լեցում էին խորհրդային զորքերով՝ Ստեփանակերտ էր եկել նարզի բնակչության զգալի մասը: Բազմահազարանոց քաղաքը հավաքվել էր կենտրոնական հրապարակում, եկել էին նույնիսկ մանկամարդ կանայք փոքրիկ երեխաների հետ:

Այդ օրերին արդեն իսկ մեծ թիվ էին կազմում շարժման ակտիվիստ կանայք, որոնց թվում էր նաև Վալյա Մեհրաբյանը: Առաջին օրերից նա մասնակցում էր ստորագրահավաքներին, թուցիկներ տարածում, շրջաններից պատգամավորների ներկայությունն ապահովելու համար կազմակերպչական աշխատանքներ կատարում, ատկիվորեն մասնակցում հանրահավաքներին: Յետագայում պարետային ժամի պատրվակի տակ, երբ Ադրբեյջանի իշխանավորները փորձում էին ԼՂԻՄ-ի ներքին գործերի բաժնի զենքերը բռնագրավել, արցախի 30 կանանց, այդ թվում նաև Վալյա Մեհրաբյանի համար դիմադրության արդյունքում զենքի բռնագրավման ծրագիրը ձախողվեց²:

Փետրվարի 14-ին և 15-ին Ստեփանակերտում շարունակվում էին հանրահավաքները, ցուցարարները կենտրոնական հրապարակում «վրաններ էին սարքել, խարույկներ էին վառում, գյուղերից փայտ, հաց, մթերք բերում»: Յանրահավաքի մասնակիցների թիվը հասնում էր 50-60 հազարի³:

Փետրվարի 19-20-ի հանրահավաքներում և ժողովրդական պատգամավորների շրջանային խորհրդների նստաշրջաններում պահանջվում էր հրավիրել մարզ-խորհրդի արտահերթ նստաշրջան և որոշում ընդունել Լեռնային Ղարաբաղն Ադրբեյջանի կազմից դուրս բերելու և Յայաստանի հետ վերամիավորելու մասին:

¹ «Շարժում 88», թիվ 2, փետրվարի 20, 2008:

² Տես «Մարտիկ», թիվ 10, 2001 թ., էջ 4:

³ Տես Ղարաբաղյան հարց, Ստեփանակերտ, 1991, էջ 84-85:

Նստաշրջանին մասնակցելու համար փետրվարի 20-ի առավոտյան Ստեփանակերտ էին ժամանում մարզխորհրդի պատգամավորները՝ չնայած Ադրբեյջանի ԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ք. Բագիրովի հրահանգով ամենուրեք խոչընդոտներ էին ստեղծվում, որպեսզի պատգամավորները շրջաններից չկարողանան հասնել մարզկենտրոն: Այնուամենայնիվ, նույն օրը ժամը 11-ին Ստեփանակերտում հրավիրվում է մարզխորհրդի գործկոմի նիստ, որին մասնակցում էին նաև Արաքսյա Տոնոյանը (մարզգործկոմի նախագահի տեղակալ) և Ռիմա Խաչիյանը (մարզգործկոմի քատրուղար): Քննարկվեցին մի քանի հարցեր, որոնցից էին.

1. ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի արտահերթ նստաշրջան հրավիրելու մասին:

2. ԼՂԻՄ փողոցներում, հրապարակներում, գրոսայգիներում և պուրակներում ժողովների, հանրահավաքների, փողոցային երթերի, ցույցերի և այլ միջոցառումների անցկացման կարգի մասին:

Ելույթ ունեցավ նաև Արաքսյա Տոնոյանը՝ առաջարկելով ընդառաջել պատգամավորների պահանջին և նույն այդ օրը հրավիրել մարզխորհրդի արտահերթ նստաշրջան: Սակայն գործկոմի արձանագրության մեջ ձևակերպվել է հետևյալ ձևով.

«1. Հետաձգել արտահերթ նստաշրջան հրավիրելու մասին հարցի քննարկումը,
2. Հանձնարարել նախագահին՝ մանդատային հանձնաժողովի հետ համատեղ ստուգել նստաշրջան պահանջած պատգամավորների լիազորությունների և տվյալների արժանահավատությունը»¹:

Այնուամենայնիվ, շարունակվում էին աշխատանքները նույն օրը մարզխորհրդի արտահերթ նստաշրջան հրավիրելու ուղղությամբ: Փետրվարի 20-ին, ժամը 16-ին տեղի ունեցավ Ստեփանակերտի ժողովրդական պատգամավորների 20-րդ գումարնան քաղաքային խորհրդի 4-րդ արտահերթ նստաշրջանը: Քննարկվեց «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզն Ադրբեյջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմ հանձնելու մասին աշխատավորության պահանջի կապակցությամբ Ստեփանակերտ քաղաքում ստեղծված իրավիճակի մասին» հարցը: Ելույթ ունեցավ 11 ժողագումարով, այդ թվում Ստեփանակերտի Ա. Գորկու անվան պետական դրամատիկական քատրոնի դերասանութիւն, ժողովրդական արտիստ Մարգո Բալասանյանը, մարզի մշակույթի բնագավառի արհմիության կոմիտեի նախագահ Լառլրա Ղարամյանը, Ստեփանակերտի կոնդենսատորների գործարանի բանվորութիւնի իրինա Գևորգյանը, Ստեփանակերտի կուսաքաղկոմի քարտուղար Հասմիկ Միքայելյանը և ուրիշներ²:

Մարգո Բալասանյանն իր ելույթում խոսեց հայկական թատրոնի մասին, հատկապես Ստեփանակերտի Ա. Գորկու անվան պետական դրամատիկական թատրոնի կատարած աշխատանքների մասին: «Աշխատանքի բնույթով ես հաճախակի եմ լինում Ղարաբաղի ամենածայրանասային բնակավայրերում և իրազեկ եմ այն տիսուր փաստին, որ սոցիալ-տնտեսական ծանր վիճակի

¹ Յ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 36:

² Տես ԼՂԴ ՊԱ, ֆ. 1, գ. 2, գ. 186, թ. 7:

հետևանքով մեր լեռնային գյուղերը դատարկվում են: Դա այն պատճառներից մեկն է, որը արցախցիմերին ստիպում է իրենց երկրամասը վերամիավորել Հայկական Հանրապետության հետ: Ղարաբաղից հեռացած հայերին փոխարինելու են գալիս ադրբեջանցիները, որոնց թիվը գնալով ավելի է շատանում: Հարգելի պատգամավորներ, մեր քատրոնի կոլեկտիվն ինձ հանձնարարել է հայտնել իրենց ցանկությունը՝ Լեռնային Ղարաբաղը վերամիավորելու Հայաստանի հետ», – իր ելույթում կարևորեց Ս. Բալասանյանը¹:

Լաուրա Ղարամյանը խոսեց 1920-ական թվականների սկզբին կատարված պատմական կոպիտ սխալի մասին և որպես պատգամավոր պահանջեց այդ սխալն ուղղել, որը մարզի ամբողջ բնակչության ցանկությունն է: «Մեր մարզը զրկված է բազմաթիվ հնարավորություններից, նույնիսկ չունենք իրատարակելու իրավունք, չունենք հայերեն լեզվով կնիք, մշակույթի պալատ, անչափ թույլ է մարզի կուլտուր-լուսավորչական իիմնարկների նյութական բազան: Մեր բարձրացրած հարցում ազգայնական ոչ մի միտում չկա: Ես լիովին հավատում եմ, որ այն կվճռվի դրականորեն», իր ելույթում նշեց Լ. Ղարամյանը²:

Համաձայն Իրինա Գրիգորյանի ելույթի՝ հայ ժողովրդի ծգտունը բխում է ժողովրդավարության և իրապարակայնության պահանջներից, որը խորթ է ադրբեջանցիներին: «Մենք արդարացիորեն պահանջում և պայքարում ենք լինել մեր ժողովրդի հետ: Ես մայր եմ, իմ ցանկությունն է, որպեսզի զավակներս չմոռանան մայրենի լեզուն, հնարավորություն ունենան դիտել հայկական հեռուստացույց, լսել հայերեն ռադիոհաղորդումներ, ուսումնասիրել հայ ժողովրդի պատմությունը, տեր կանգնել մեր պապական գերեզմաններին, պահպանել մեր երկրամասի ճարտարապետական հուշարձանները: Ես պահանջում եմ Ղարաբաղը վերամիավորել մայր Հայաստանին», – կարևորեց Ի. Մարտիրոսյանը³: Իր ելույթում Հասմիկ Միքայելյանը պաշտպանեց հիշյալ առաջարկությունները՝ Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ստեփանակերտի 20-րդ գումարման քաղյուրիրդի չորրորդ արտահերթ նստաշրջանն ընդունեց որոշում, որտեղ մասնավորապես ասվում է.

«Արտահայտելով աշխատավորության կամքը, քաղյուրիրդի նստաշրջանը պաշտպանում է նրա պահանջները Լեռնային Ղարաբաղի հնքնավար Մարզն Աղրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմ հանձնելու վերաբերյալ: Այդ հարցի դրական լուծունը բխում է լենինյան ազգային քաղաքականությունից և մարզի աշխատավորության շահերից: Նստաշրջանը գտնում է, որ Հայաստանի հետ ԼՂԻՄ-ի միավորումը բխում է մարզի հայ բնակչության արմատական շահերից, նրա մշակութային և հոգևոր պահանջների բավարարումից:

Խնդրել ԼՂԻՄ մարզգործկոմին՝ ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի նստաշրջանում քննարկել տվյալ հարցը.

¹ ԼՂԴ ՊԱ ֆ. 2., գ. 186, թ. 22-23:

² ԼՂԴ ՊԱ, ֆ. 1, գ. 2, գ. 186, թ. 7:

³ Նույն տեղում, թ. 8:

Խնդրել Աղրբեջանական ԽՍՀ, Հայկական ԽՍՀ գերազույն խորհուրդների նախագահություններին և ԽՍՀՄ Գերազույն խորհրդի նախագահությանը՝ քննարկել և դրականորեն լուծել լեռնային Ղարաբաղն Աղրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմ հանձնելու մասին հարցը»¹:

Ընդունված որոշումն անմիջապես հանձնվում է մարզկոմ և մարզխորհրդի գործկոմ:

1988-ի փետրվարի 20-ի օրվա վերջին ցուցարարները շրջապատել էին ԼՂԻՄ մարզխորհրդի շենքը՝ պահանջելով հրավիրել մազխորհրդի նստաշրջան:

1988 թ. փետրվարի 20-ի երեկոյան ժամը 20 անց 20 րոպեին նստաշրջանն սկսեց աշխատանքները: 150 պատգամավորից ներկա էր 111-ը, բացակա՝ 39-ը: Բարձի պահանջով մարզխորհրդի աղրբեջանցի պատգամավորները, որոնք թվով 26-էին, հրաժարվել էին մասնակցել²:

Նստաշրջանում փոքր թիվ չէին կազմում նաև կին պատգամավորները, որոնք նույնպես հանդես եկան ելույթներով՝ պահանջելով կատարել արցախցիների կամքը: Ելույթ ունեցան 27 կին պատգամավորներ, այդ թվում՝ Արմիդա Գաբրիելյանը (թիվ 5 ընտրատարածք), Սուլրայա Գրիգորյանը (թիվ 2 ընտրատարածք), Ռախիս Գրիգորյանը (թիվ 115 ընտրատարածք), Ռիտա Մնացականյանը (թիվ 130 ընտրատարածք), Գոհար Գրիգորյանը (թիվ 4 ընտրատարածք), Ժաննա Մելքոնյանը (թիվ 92 ընտրատարածք), Լիդիա Սարգսյանը (թիվ 21 ընտրատարածք), Էսմիդա Առաքելյանը (թիվ 84 ընտրատարածք), Լիդա Պետրոսյանը (թիվ 101 ընտրատարածք), Անժելա Հակոբյանը (թիվ 60 ընտրատարածք), Նարինե Ավանեսյանը (թիվ 7 ընտրատարածք), Լուսիկ Հակոբյանը (թիվ 82 ընտրատարածք), Ժաննա Մովսիսյանը (թիվ 42 ընտրատարածք), Ռիտա Նալբանդյանը (թիվ 41 ընտրատարածք), Լաուրա Համբարձումյանը (թիվ 128 ընտրատարածք), Ասյա Ղազարյանը (թիվ 58 ընտրատարածք), Անալյա Հակոբյանը (թիվ 73 ընտրատարածք), Անիկ Սուլբիասյանը (թիվ 96 ընտրատարածք), Անալյա Աբրահամյանը (թիվ 104 ընտրատարածք), Ժուլիետա Լալայանը (թիվ 102 ընտրատարածք), Ռազմելա Անանյանը (թիվ 100 ընտրատարածք), Լենա Ղահրամանյանը (թիվ 91 ընտրատարածք), Ալվարդ Սարդարյանը (թիվ 87 ընտրատարածք), Նվարդ Պետրոսյանը (թիվ 67 ընտրատարածք), Թամարա Գալստյանը (թիվ 72 ընտրատարածք), Սիլվա Արզումանյանը (թիվ 110 ընտրատարածք), Զինա Բաբայանը (թիվ 108 ընտրատարածք):

Ընտրողների և իրենց անունից նրանք պահանջում էին ԼՂԻՄ-ը վերամիավորել Հայկական ԽՍՀ-ին³:

Արտահերթ նստաշրջանն ընդունեց որոշում, որտեղ մասնավորապես ասվում է. «Ընդառաջելով ԼՂԻՄ աշխատավորների ցանկություններին՝ խնդրել Աղրբեջանական ԽՍՀ Գերազույն խորհրդին ու Հայկական ԽՍՀ Գև-ին՝ խորն ընթանան զգացում

¹ Նույն տեղում, թ. 18:

² Տես Պատմական նստաշրջան, փաստաթղթերի և նյութերի ժողովական, Ստեփանակերտ, 2008, էջ 23-107:

³ Նույն տեղում, էջ 23-107:

դրսևորել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իղձերի նկատմամբ և լուծել ԼՂԻՄ-ը Աղրբեջանական ԽՍՀ կազմից Յայկական ԽՍՀ կազմ հանձնելու հարցը, միաժամանակ միջնորդել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առջև՝ ԼՂԻՄ-ը Աղրբեջանական ԽՍՀ կազմից Յայկական ԽՍՀ կազմ հնաձնելու հարցի դրական լուծման համար»¹:

Սակայն ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոն փետրվարի 21-ին ընդունեց որոշում, որում դարաբարյան հարցը որակեց «մի խումբ ծայրահեղականների ու ազգայնամոլների սադրանք», ինչին հաջորդեցին հանրահավաքները և գործադրությունները Ստեփանակերտում և Երևանում: Յայաստանում շարժման գլուխ անցավ 1988 թ. փետրվարի 22-ին ձևավորված «Ղարաբաղ» կոմիտեն, որի իհմնական խնդիրն էր սուբյ հանել ժողովրդին արցախահայության պահանջին սատար կանգնելու:

1988թ. փետրվարի 27-29-ին Աղրբեջանի Սումգայիթ քաղաքում կազմակերպված հյայկական ջարդերը ժողովրդական ցասումը հասցրին բարձրակետին: Որոշվեց «Ղարաբաղ» կոմիտեի նման հասարակական-քաղաքական կառույց ստեղծել նաև Արցախում: Մարտի 1-ի ուշ երեկոյան՝ Ստեփանակերտի կենտրոնական հրապարակում տեղի ունեցած հանրահավաքում ընտրվեցին նախատեսված կազմակերպության անդամները՝ թվով 66 հոգի, որոնք իրենց հերթին՝ հանրահավաքից անմիջապես հետո տեղի ունեցած նիստում ընտրեցին խորհուրդ՝ բաղկացած 11 հոգուց: Կառույցն անվանվեց «Կռունկ» հասարակական-քաղաքական կազմակերպություն կամ կոմիտե, որը կոչված էր ղեկավարելու շարժումը: «Կռունկ»-ի խորհրդի անդամ է ընտրվում նաև շարժման ակտիվ մասնակից, դերասանուիկ ժամանակաշրջանում՝ ստանձնելով հանրահավաքների կազմակերպման համձնաժողովի նախագահի պարտականությունները²: «Կռունկ»-ի գործունեությունն արգելվեց մարտի 24-ին, ուստի այն ընդհատակ անցավ՝ միավորվելով «Տնօրենների խորհուրդ» կազմակերպությանը և գործելով նրա անվան տակ:

Մարտի 8-ին Ստեփանակերտի հուշահամալիրում կազմակերպվեց հանրահավաք՝ նվիրված Սումգայիթի ցեղասպանության զոհերի հիշատակին: Յանրահավաքում ելույթ ունեցողները դատապարտեցին Սումգայիթի ոճագործությունը: Ելույթ ունեցած նաև ժամանակաշրջանում՝ Ռուսական Դաշտավայր, Ռուսական Դաշտավայր (Ստեփանակերտի պետական մանկավարժական ինստիտուտի դասախոս), Ումա Քոչարյանը (ջուլհակուիկ)³:

Յանարհավաքի հաջորդ օրը՝ մարտի 9-ին, նոր պատվիրակություն մեկնեց Մոսկվա՝ Ղարմետաքսկոմիտեի կուսկոմիտեի քարտուղար Ռոբերտ Քոչարյանի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում էին նաև կուսարզկոմի բյուրոյի անդամ, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր ջուլհակուիկ Սահիդ Օրբելյանը, ջուլհակուիկ, սոցիալիստական աշխատանքի հերոս Քնարիկ Առաքելյանը, մարզխորհրդի պատգամավոր բանվորուիկ Տատյանա Սոբոլյան:

¹ Նույն տեղում:

² Տես Յ. Աբրահամյան, Արցախյան գոյամարտ, Երևան, 1991, էջ 159:

³ Տես Ս. Խաչատրյան, Վաստակված պատիվ, Ստեփանակերտ, 2002, էջ 248:

Պատվիրակությանը, որն իր հետ տարել էր ստորագրությունների նոր կապոց և բազմաթիվ բողոք-նամակներ, չհաջողվեց հանդիպում ունենալ Մ. Գորբաչովի հետ։ Այս անգամ ևս չարդարացվեցին Մոսկվա մեկնած հերթական պատվիրակության հոլյուսը։ Կենտրոնը բացահայտորեն մերժում էր հայ ժողովրդի բարձրացրած Լեռնային Ղարաբաղի խնդրի արդարացի լուծման պահանջը։

Արդեն 1988 թ. մարտի վերջերին շարժումը համընդհանուր բնույթ էր ստացել։ Առաջ մնելով Արցախի հիմնախնդիրը՝ շարժման մասնակիցները վերադաս մարմիններից պահանջում էին այն լուծել ժողովրդավարական պահանջներին համապատասխան և հույս ունեին, թե Մոսկվան կը նդառաջի իրենց խնդրանքին։ Այդ հույսով էլ 1988 թ. մայիսի սկզբներին Մոսկվա մեկնեց ևս մի պատվիրակություն՝ Ստեփանակերտի պետական մանկավարժական ինստիտուտի դասախոս Յամլետ Գրիգորյանի գլխավորությամբ։ Պատվիրակության կազմում էր նաև նույն ինստիտուտի դասախոս Արգիկ Մխիթարյանը։ Պատվիրակությանը մի շաբթ հանդիպումներ ունեցավ, սակայն չհասնելով որևէ շոշափելի արդյունքի՝ մայիսի 24-ին վերադարձավ¹։

Հաջորդ օրը պատվիրակությունը մասնակցեց Երևանի Թատերական իրապարակում կայացած բազմահազարանոց հանրահավաքրին։ Ելույթ ունենալով՝ Արգիկ Մխիթարյանը պատմեց Մոսկվայում պատվիրակության ունեցած հանդիպումների մասին։ Յանրահավաքում ելույթ ունեցավ նաև Արցախից ժամանած Ժալանչյանը՝ հանգանառորեն ներկայացնելով մարզում տիրող իրավիճակը, Աղրբեջանի կոմկուսի Կենտկոմի պլենումը և. Լիգազովի ելույթի բացահական հետևանքները, տեղի ունեցող գործադրությունը, արցախահայության վճռականությունը, Ստեփանակերտ բերված մեծարթիվ զինվորականների սանձարձակ գործողությունները։ Եվ այդ ամենը, – խոսքի ավարտին ասաց նա, – Լեռնային Ղարաբաղի բնակչությանը ստիպում է դիմել ծայրահեղ քայլի՝ գործադրությունը, որը, ինչպես պարզվում է, չի անհանգստացնում կենտրոնական իշխանություններին²։

Պայքարը շարունակվում էր։ Մայրաքաղաքի կենտրոնական հրապարակը օլակված էր ԽՄՀՄ ներքին գորքերի կողմից, սակայն դա չէր հուսահատեցնում ցուցարարաններին։ հանրահավաքները շարունակվում էին «Կոլցեվոյ» կոչվող (ներկայում՝ Ազատություն) հրապարակում։ Յանրահավաքներից մեկում, որը տեղի ունեցավ 1988-ի հունիսի 1-ին, ելույթ ունեցան նաև Մարգո Բալասանյանը, ժամանակակից պատվիրակության և Տամարա Շվեդովան (հաշվապահ)։ «Մեր ծայնը, որն արձագանք է գտել ամբողջ աշխարհում, զգիտեմ ինչու այդպես ուշ է հանում մեր մայրաքաղաք Մոսկվային։ Բայց եկեք չհուսահատվենք. մեր սրտում պահած երկար տարիների իշղը այսօր պոռթկացել է վարար գետի պես և անպայման կստանա իր լուծումը», – ելույթում ասաց Մարգո Բալասանյանը։ «Մեզ համար հստակ է, որ մենք այլևս ոչ մի վայրկյան չենք կարող մնալ Աղրբեջանի կազմում։ Անջատում, անջատում և միայն անջատում», – իր ելութում շեշտեց ժամանակակից պատվիրակությանը։

¹ Տե՛ս Վ. Բաղրյան, Տեսադաշտ, 1988-1994, էջ 20:

² « Հայրենյաց պաշտպան», թիվ 78, ապրիլ, 2008 թ.։

խոսքով՝ իր ռուսական հոգին չի կարող անտարբեր մնալ Արցախի ժողովորդի արդար պահանջի հանդեպ¹:

Հուլիսի 18-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստը ընդունեց որոշում ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ կազմի մեջ մտցնելու անընդունելիության մասին, այսինքն՝ Մոսկվան անհնար համարեց արցախցիների արդար պահանջի իրականացումը և այն իմանավորեց ԽՍՀՄ Սահմանադրության 78-րդ հոդվածի դրույթով, ըստ որի միութենական հանրապետության տարածքը չի կարող փոխվել առանց տվյալ պետության համաձայնության²: Փաստորեն, այդ որոշումը ոչինչ չտվեց հայ ժողովորդին, ավելի բարդացրեց Ղարաբաղյան հիմնախնդիրը:

Արցախում և Հայաստանում տեղի ունեցող հանրահավաքները դատապարտում էին հուլիսի 18-ի որոշումը: Նման հանրահավաք տեղի ունեցավ 1988-ի սեպտեմբերի 9-ին Երևանի Թատերական իրապարակում, որտեղ ելույթ ունեցավ նաև Արցախից ժամանած շարժման ակտիվ մասնակից Արաքսյա Հայրապետյանը: Նա իր ելույթովն քննադատում էր ղեկավարների հակահայկական գործունեությունը, դրվատում նրանց, ովքեր նպաստում, աջակցում են շարժմանը և կոչ անում հասնել հարցի արդարացի լուծնանը³:

Արցախում, Հայաստանում հանրահավաքները, ցուցերը, գործադուլները, դասադուլները շարունակվեցին 1988 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին՝ չնայած նրան, որ Մոսկվան և Աղրբեջանը սաստկացնում էին բռնությունները շարժման կազմակերպիչների և, առհասարակ, հայ ժողովորդի նկատմամբ: Այդ օրերին Աղրբեջանում ամենուրեք հայ ազգաբնակչության նկատմամբ իրագործվում էին բռնարարքներ՝ ստիպելով տեղահանվել, հեռանալ բնակության վայրերից: Ամեն օր Ղարաբաղ էին ժամանում Աղրբեջանի տարբեր բնակավայրերից բռնագաղթված բազմաթիվ հայ ընտանիքներ:

Հայության համար մեծագույն ողբերգություն էր 1988 թ. ղեկտեմբերի 7-ի Սպիտակի երկրաշարժը, որն ընդգրկեց Հայաստանի տարածքի գրեթե 40 տոկոսը: Երկրաշարժի հաջորդ օրը Արցախում անմիջապես դադարեցվեցին գործադուլները: Ստեփանակերտի քաղաքային պոլիկլինիկայում և մարզային հիվանդանոցում հավաքվածները, որոնց շարքերում մեծ թիվ էին կազմում նաև կանայք, արյուն էին տալիս երկրաշարժից տուժաների համար:

Ահավոր բնական աղետին հաջորդեց մարզի համակողմանի շրջափակումը: Դեկտեմբերի 19-ից Հայաստան-Արցախ ավտոբուսային երթևեկությունը լրիվ դադարեց, գրեթե փակվեց նաև օդային կապը: Չնայած այս ամենին՝ թե՛ Արցախում և թե՛ Հայաստանում շարունակվում էր ազատության պայքարը: Ու որքան էլ հայ ժողովորդի համար ողբերգական էր 1988 թվականը, այնուամենայնիվ այն պատմության մեջ կմնա որպես զարթոնքի տարի, համազգային զարթոնք, որի ակունքներում, որպես ազգային ինքնության և ազատության արթուն պահապաններ

¹ ՀԱԱ, ֆ.1, ց. 87,գ.19, թ.75:

² Տես Վ. Բաղրյան, նշվ. աշխ., էջ 27-28:

³ Տես «», 20.08, 1988:

տղանարդկանց կողքին հերոսաբար կանգնած էին նաև հայ կանայք, որոնք անգնահատելի դեր ունեցան 20-րդ դարի հայոց ազատամարտում:

Իսկուի Ավանեսյան, Արցախի կանայք 1988 թ. հայոց համազգային զարթոնքում – 1988 թ. Ղարաբաղյան շարժման ժամանակ Արցախի կանայք իրենց դրսնորել են ոչ միայն որպես պայքարի գաղափարախոսներ և նրա կրողներ, այլև որպես հայրենիքի պաշտպաններ:
Դեռևս 1985-1987 թթ. շարժման նախապատրաստական շրջանում անց է կացվել լայն բացատրական աշխատանք, ապա սկսվել է բողոք-նամակների հոսքը Մոսկվա՝ խորհրդային իշխանությանը, իսկ 1988 թ. փետրվարին տեղի են ունեցնում առաջին բազմամարդ միտինգները, ցույցերը և երթերը: Զանգվածային այդ միջոցառումների կազմակերպման և իրականացման գործում կարևոր է եղել նաև կանանց դերը:

Искуи Аванесян, Женщины Арцаха в армянском национальном движении 1988 года – 1988 .

1985-1987

1988 .

Iskuhi Avanesyan, Artsakh women during the Armenian national awakening in 1988 – During the Karabakh movement, which started in 1988, the Armenian woman was not only a struggle ideologist, organizer, and a public and political figure, but also the defender of the Motherland. At the preparatory phase of the movement, throughout 1985 and 1987, considerable explanatory work was being done for the ethnic Armenian community of NKAO, which formed the vast majority of the region. Then the flow of the petitions to the Supreme Council in Moscow followed. And later, in February 1988, the first mass demonstrations and meetings took place. The role of women was of utmost importance in the organization and holding of those mass demonstrations.

Իսկուի Ավանեսյան – Արցախի պետական համալսարանի պատմության ամբիոնի ասպիրանտ

